



Միրզախանյան Ռուբեն

Ծնվել է 1959-ին Երևան քաղաքում: Սովորել է Երևանի N114 միջնակարգ դպրոցում և Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Ստացել է պատմաբանի որակավորում: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է:

1980 թ. աշխատել է Երևանի N17 տեխնիկական ուսումնարանում որպես ուսումնաարտադրական վարպետ և քաղաքատնտեսության դասախոս:

1981-ից գիտամանկավարժական գործունեություն է ծավալում Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

1985 թ պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, շնորհվել է դոցենտի, իսկ 2010 թվականին՝ պրոֆեսորի կոչում:

2008 թ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն և ստացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1990-ին ընտրվել է, 2000 և 2006 թվականներին վերընտրվել Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի դեկան և այդ պաշտոնը զբաղեցրել է մինչև 2010 թվականի սեպտեմբերը:

2010 թ սեպտեմբերին նշանակվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար: 2011 թվականի փետրվարի 24-ին միաձայն ընտրվել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր:

Դասավանդում է «Հայ մշակույթի պատմությունն առարկան: Ռուբեն Միրզախանյանը Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության հիմնադիրներից է, ընտրվել է ՀՌԱԿ Հիմնադիր խորհրդի նախագահ, իսկ 1991-ի դեկտեմբերից մինչև 1996-ի հուլիսը եղել է ՀՌԱԿ հանրապետական վարչության ատենապետ: 1999 թվականի ապրիլին կրկին ընտրվել է ՀՌԱԿ հանրապետական վարչության ատենապետ, եղել ՀՀ նախագահին առընթեր քաղաքական խորհրդի անդամ:

2001թ. դեկտեմբերից մինչև 2003թ. հուլիսը ստանձնել է ՀՌԱԿ ատենապետի պարտականությունները:

2003 թ հուլիսից Ռուբեն Միրզախանյանը Հայաստանի Թեքեյան մշակութային միության կենտրոնական վարչության նախագահն է:

Մշակույթի զարգացման գործում ունեցած մեծ վաստակի համար 2009 թվականին Ռուբեն Միրզախանյանին շնորհվել է ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի պատվավոր կոչում :

1995 և 1999 թվականներին Ռուբեն Միրզախանյանն ընտրվել է Ազգային եկեղեցական ժողովի պատգամավոր: Երկրին, ժողովրդին, սուրբ եկեղեցուն բերած ազնիվ ծառայությունների բարձր գնահատանքով, 2009 թվականին Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը Ռուբեն Միրզախանյանին շնորհել է Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ պատվո բարձր շքանշանը: Ռ. Միրզախանյանը Համաշխարհային հայկական կոնգրեսի գլխավոր խորհրդի, «Ազգ», օրաթերթի, «Պայքար», ամսագրի հիմնադիր և խմբագրական խորհրդի անդամ է, «Թեքեյան Կենտրոն», հիմնադրամի խորհրդի անդամ: Ռուբեն Միրզախանյանը երեք գրքի և երեսունհինգ գիտական, գիտամեթոդական ու շուրջ յոթանասուն հրապարակախոսական հոդվածների հեղինակ է, բազմիցս մասնակցել է միջազգային, քաղաքական և գիտական խորհրդածողովների: